ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ավետիք Իսահակյանի «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծության ուսուցումը 8-րդ դասարանում

ԱՌԱՐԿԱ՝ Գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Վարդուհի Կլազանց

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ն. Խնձորեսկի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Կամոյի Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
1. Ընդհանուր տեղեկություններ՝ բանաստեղծության մասին 5
2. «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծության ուսուցման քայլաշար 6
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 11
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավետիք Իսահակյանի «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծությունը Ռիալտոյի կամրջի վրա հասուն տղամարդու և առեղծվածային աղջկա պատահական հանդիպման պատկերի նկարագրությունն է: Այս քնարական ստեղծագործությունը կենտրոնանում է սիրո, գեղեցկության և ժամանակի ընթացքի թեմաների մեջ: Բանաստեղծությունը նաև պատուհան է բացում դեպի Իսահակյանի անձնական փորձառությունները, հատկապես երիտասարդության տարիներին նրա անպատասխան սերը: Սույն հետազոտությունը բացահայտում է 8-րդ դասարանի աշակերտների շրջանում նշյալ բանաստեղծության ուսուցման հնարավոր օգուտներն ու մարտահրավերները՝ հաշվի առնելով դրա գրական և զգացմունքային հարուստ բովանդակությունը:

Իսահակյանի բանաստեղծությունը սովորողներին ծանոթացնելը կարող է կրթական արժեքավոր փորձ լինել, քանի որ այն հնարավորություն կտա նրանց զբաղվելու հայ գրականության նշանավոր գործով և պատկերացում կազմելու մարդկային հույզերի բարդության մասին: Ավելին՝ բանաստեղծության պատկերավոր խոսքն ու ներհայեցման դրդող ոճը կառաջնղեն լեզվի, խորհրդանիշների և ստեղծագործական գործընթացի շուրջ քննարկումների: Այս հանգամանքներով էլ պայմանավորված է **թեմային արդիականությունը**:

Հետազոտության **նպատակն է** ներկայացնել Ավետիք Իսահակյանի «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծության՝ 8-րդ դասարանում ուսուցանման արդյունավետ եղանակը՝ առաջարկելու քայլաշար՝ հայ գրականության նմանատիպ ստեղծագործությունների ավելի խոր ընկալման և թեմաների ու գրական հնարների ուսումնասիրման միջոցով ուսանողների քննադատական մտածողության հմտությունների զարգացման համար:

Հետազոտության խնդիրներն են՝

- վերլուծել Իսահակյանի բանաստեղծության ուսուցման ազդեցությունը սովորողների՝ գրական երկի ընկալման և վերլուծման կարողության վրա,
- ուսումնասիրել բանաստեղծության ավելի համապարփակ ըմբռնման հարցում միջառարկայական կապերի ներուժը,
- առաջարկել բանաստեղծության ուսուցանման համար մանկավարժական մեթոդներ և գործողությունների հաջորդականություն՝ հենվելով տարբեր դասարաններում նման եղանակով ուսուցման մեր փորձառության և սովորողներից ստացված պատասխանների և բանաստեղծության մեկնաբանությունների վրա:

Սույն հետազոտության **օբյեկտը** Ավետիք Իսահակյանի «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծության ուսուցումն է՝ 8-րդ դասարանի աշակերտներին:

Հետազոտության **առարկան** կրթական տարբեր մեթոդները, հնքարները և վարժություններն են, որոնք օգտագործվում են բանաստեղծության առանձնահատկություններն արդյունավետորեն փոխանցելու և բովանդակալից քննարկումներ խթանելու համար:

Հետազոտությունն իրականացվել է դասարանային դիտումների և տվյալների վերլուծության **մեթոդների** միջոցով:

1. Ընդհանուր տեղեկություններ՝ բանաստեղծության մասին

«Մի մրահոն աղջիկ տեսա»-ն քնարական բանաստեղծություն է, որի մեջ կենսափորձով հարուստ մարդը և սիրո անմիջական առարկան՝ մրահոն աղջիկը, պատահաբար հանդիպում են Ռիալտոյի կամուրջին: Աղջիկը գեղեցկուհի է, և նրա աչքերից, ամբողջ շարժուձևից սեր է հորդում: Նրանց հայացքները հանդիպում են, և բանաստեղծի հոգին փոթորկվում է՝ հիշելով իր պատանեկությունը, երբ նման մի գեղեցկուհի կոտրել էր իր պատանի սիրտը: Այստեղ բանաստեղծի անհատականությունն ավելի ակնհայտ է, որովհետև տողերի մեջ առկա են Իսահակյանի անձնական կյանքի մանրամասները. հայտնի է, որ պատանեկության տարիներին նա սիրահարված է եղել Շուշանիկ անունով մի աղջկա, որին, սակայն, չի հասել: Եվ դրա համար էլ ասում է. «Մի մրահոն կույս էր քեզ պես./ Կոտրեց սիրտս պատանի…»:

Բանաստեղծության հերոսներն են մի անանուն մրահոն գեղեցկուհի, որը խորհրդանշում է կանացի դյութանքը, և հեղինակը, որն արդեն կյանքի փորձով հարստացած հասուն այր էր: Աղջկա գեղեցկությունը ներկայացված է արտակարգ գրավչությամբ: Իսահակյանն ասես նկարում է այդ աղջկան: Մի՞թե լինում են սև արևներ: Այս դեպքում, այո՛, լինում են, որովհետև աչքերի սև փայլը բանաստեղծը համեմատում է արևի անշեջ բոցի հետ: Կան այսպիսի արտահայտություններ՝ կրակ աչքեր, կրակված հայացք, աչքերի բոց: Ահա այս վառվռուն սև աչքերի կրակն է, որ աղջկա աչքերը դարձնում է «սև արևներ»:

Բանաստեղծությունը Վարպետի սիրերգության լավագույն էջերից է, որի «Տառապանքս փորձ ունի» տողը թևավոր խոսք է դարձել: Պատկերավոր նկարագրությամբ ընթերցողը տեսնում է ոչ միայն գնչուհու նմանվող գեղուհու հագուկապը, գալարուն շարժուձևը, աչքի բոցը, այլև պոետի տառապալից, խուսափող հայացքը:

2. «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծության ուսուցման քայլաշար

Դասի խնդիրները՝

1. լուռ և բարձրաձայն արտահայտիչ ընթերցանություն,
2. բնագրային աշխատանք,
3. ստեղծագործության հերոսների բնութագրում, բնավորությունների բացահայտում,
4. սովորողների անհատական և զույգերով աշխատանքի, ազատ և անկաշկանդ արտահայտվելու, դատողություններ անելու, միմյանց հետ հաղորդակցվելու, բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում:

Ուսումնական գործունեության տեսակները՝

1. անհատական,
2. զույգերով:

Ուսումնական գործունեության ձևերը՝

1. լուռ և բարձրաձայն արտահայտիչ ընթերցանություն,
2. հարցերի ձևակերպմամբ փոխստուգում և փոխգնահատում,
3. հեղինակի, նրա ստեղծագործության մասին հանրագիտարանային, լրացուցիչ տեղեկությունների հավաքում և ներկայացում,
4. աշխատանք բնագրով,
5. գրառումնոր կատարելու և ներկայացնելու փորձ:

Կիրառվող մեթոդները, հնարները, վարժությունները

1. Մտագրոհ՝ մտքերի տարափ, ուղեղային գրոհ,
2. Ազատ և բաց հարցեր,
3. Համառոտ դասախոսություն,
4. Քառաբաժան,
5. Կենսագրական բանաստեղծություն:

Միջառարկայական կապ՝

1. Աշխարհագրություն,
2. Պատմություն,
3. Հայոց լեզու,
4. Արվեստ:

Դասի ընթացքը: Նպատակահարմար է դասի ընթացքի նկարագրություն-սեղմագիրը կազմել՝ ըստ ուսումնական աշխատանքի քայլերի:

Քայլ 1-ին: Նախորդ դասի տեղեկություններ Ավ. Իսահակյանի կենսագրության մասին՝ յուրացման ստուգում, գնահատում, ամրապնդում: Ուսուցիչը դիմում է դասարանին, խնդրելով պատասխանել, թե ինչ էր հանձնարարված սովորելու համար: Հանձնարարություն-առաջադրանքների կատարման ստուգումը կազմակերպվում է հարց ու պատասխանի միջոցով: «Ի՞նչ գիտենք Իսահակյանի մասին» ընդհանուր հարցադրման ընթացքում աշակերտները միմյանց հարցեր են ուղղում, վերլուծում, քննարկում պատասխանները, անհրաժեշտության դեպքում լրացումներ կատարում: Խրախուսվում և գնահատվում են ոչ միայն ճիշտ, ամբողջական պատասխանները, այլև նպատակային, խելամիտ և ճիշտ ձևակերպված հարցերը:

Ուսուցիչն ուղղորդում է սովորողների մտքի ընթացքը, առանձին դեպքերում հարց ուղղում հարց տվող աշակերտին՝ խնդրելով մեկնաբանել հարցն ընտրելու նպատակը, նաև այն, թե ինչու է հարցը հենց այդ դասընկերոջն ուղղում:

Քայլ 2-րդ: Նոր նյութի ուսումնասիրություն՝ ԽԻԿ համակարգով:

Խթանման փուլ

Ուսուցիչը հայտնում է ուսումնական նոր նյութի վերնագիրը, ապա հրահանգավորում բացել դասագրքերը և երկու անգամ լուռ ընթերցել բանաստեղծությունը՝ ծանոթանալով նրա բովանդակությանը: Ընթերցանության ավարտից հետո նախընտրում է պատասխանել, թե աշակերտները ինչ կապ, առնչություն են տեսնում բանաստեղծի կենսագրության և ընթերցված բանաստեղծության միջև: Պատասխանները լսելուց, կարծիքներ փոխանակելուց հետո անցնում են դասի հաջորդ փուլին:

Իմաստի ընկալման փուլ: Ուսուցիչը հրահանգավորում է համացանցից, հանրագիտարաններից և լրացուցիչ գրականությունից ընտրել նյութեր Իտալիայի և Վենետիկ քաղաքի մասին, զույգերով քննարկել, համակարգել և ըստ ցանկության, ներկայացնել դասարանին: Կատարված աշխատանքին հաջորդում է ուսուցչի խոսքը:

Քայլ 3: Համառոտ դասախոսություն: *Դասախոսության սեղմագիր:* Մենք արդեն իմացանք, որ Իսահակյանն ստեղծագործել է գրական գրեթե բոլոր ժանրերով: Նրա ժառանգության բովանդակությունը նույնպես հարուստ է՝ բնություն, հայրենիք, սեր: Վարպետի սիրո քնարը երկու լար ունի: Լարերից մեկով հնչյում է ժողովրդական ակունքներից սնվող գեղջկական պարզ, անմիջական, մաքուր, պատանեկան սիրո մեղեդին, մյուսով՝ եվրոպական երկրներում շրջագայած, ժամանակի փիլիսոփայական միտքն ու ոգին ուսումնասիրած, հզոր և ուժեղ կամք, գեղեցիկի և սիրո ընկալման նոր որակներ ունեցող կիրթ մտավորականի սիրո

համանվագը: Սրա արտահայտությունն, անշուշտ, «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծությունն է:

Մի մրահոն աղջիկ տեսա
Ռիալտոյի կամուրջին,
Հորդ մազերը - գետ գիշերվա,
Եվ հակինթներ՝ ականջին:

Աչքերը սև – արևներ սև,
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու գլուխըս կախեցի.
Ժպտաց ժպտով առեղծվածի,
Հավերժական կանացի:

Միամիտ չեմ՝ հավատամ քեզ.
Տառապանքս փորձ ունի.
Մի մրահոն կույս էր քեզ պես,
Կոտրեց սիրտս պատանի…

Քայլ 4: Բանաստեղծության բարձրաձայն արտահայտիչ ընթերցանություն:

Քայլ 5: Հարցեր՝ ուղղված դասարանին:

Աշխատանքն անհատական է: Ուսուցչի առաջադրած հարցերը դրվում են աշխատանքային տետրերում: Դրանք կարող են ունենալ բովանդակային այսպիսի ուղղվածություն.

1. Ի՞նչ է պատկերում բանաստեղծությունը:
2. Ինչպիսի՞ն է կամուրջին կանգնած աղջիկը, ինչ արտաքին ունի:
3. Ինչպիսի՞ ներքին, հոգեկան աշխարհ կարող է ունենալ նա, ինչո՞ւ ես այդպես կարծում, փաստարկիր, կարծիքդ հիմնավորիր բնագրային մեջբերումներով:
4. Ի՞նչ կարող է խորհրդանշել ծաղկանկար շալը և այլն:

Հարցերին պատասխանելու համար սահմանվում է ժամանակ: Աշակերտները տետրերում պատասխանների տեսքով գրառումներ են կատարում և ժամանակը լրանալուն պես ներկայացնում իրենց պատասխան - դիտարկումները:

Քայլ 6: Բնագրային աշխատանք. պատկերային համակարգի բացահայտում: Առանձնացվում են խոսքի պատկերավորման միջոցները՝

- փոխաբերություն,
- փոխանունություն,
- մակդիր,
- անհասկանալի, անծանոթ բառեր ու արտահայտություններ:

Ուսուցչի օգնությամբ դրանք պարզաբանվում են և մեկնաբանվում: Այնուհետ ուսուցիչը գրատախտակին գրում է *սիրուն և գեղեցիկ* բառերը, ապա դիմում դասարանին՝ խնդրելով պատասխանել, թե բանաստեղծության հերոսուհուն բնութագրելու համար գրված բառերից որոնք են ավելի նպատակահարմար:

Կատարվում է բառերի ստուգաբանություն. պարզում են, որ **սիրուն** բառի անհնչյունափոխ արմատը **սեր**-ն է, իսկ **գեղեցիկ** բառի **գեղ** արմատը հնդեվրոպական մայր լեզվում նշանակել է կանչ, գեղգեղանք, գեղգեղել: Հետևում է, որ **գեղուհի, գեղանի, գեղեցիկ** նշանակում է նաև **կանչող, հմայող** և ավելի նպատակահարմար է առեղծվածային ժպիտով կույսի բնութագրման համար:

Կշռադատման փուլ:

Քայլ 7: «Քառաբաժան» գրավոր վարժություն:

Աշխատանքային տետրի էջի մակերեսը աշակերտները բաժանում են չորս մասի՝ այդ մասերից յուրաքանչյուրում մտքերը համապատասխանաբար գրառելու համար: Կատարվող վարժությունը կունենա այսպիսի ուրվապատկեր:

1. Ինչ էի տեսնում բանաստեղծությունը կարդալիս Զգայություններ. • Տեսողական • Լսողական • Զգացական	**2. Ինչ էի զգում բանաստեղծությունը կարդալիս** Վերաբերունք. • Հույզեր • զգացմունքներ

3. **Կապը իրական կյանքի հետ.** • Զուգորդություններ • Առնչություններ • Օրինակներ	4. **Նոր վերնագիր և պատկերանշան.** • Ընդհանրացում • Վերաիմաստավորում • գնահատում

Գծապատկեր 1-ին: Քառաբաժան

Քայլ 8: Տնային հանձնարարություն: Հանձնարարվում է քնարական հերոսուհու համար ստեղծել կենսագրական բանաստեղծություն, որի համար սովորաբար ընդունված են հետևյալ բաղադրիչները՝

- անունը, բնավորությունը. նշել երեք հատկանիշ,
- սիրում է. նշել երեք անձ կամ առարկա,
- ի՞նչ է զգում. նշել երեք զգացողություն,
- ինչի՞ց է վախենում. նշել երեք պատճառ,
- ինչի՞ կարիք ունի. Նշել երեք ցանկություն,
- ուզում է տեսնել,
- բնակվում է,
- ազգանունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով 8-րդ դասարանում Ավետիք Իսահակյանի «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծության ուսուցման գործընթացը՝ հետազոտությունը վերահաստատում է նշյալ բանաստեղծության՝ ուսումնական ծրագրում ընդգրկելու կարևորությունը՝ ընդգծելով դրա արժեքը՝ որպես գրական ստեղծագործություն, որը սովորողներին ներգրավում է սիրո, գեղեցկության և ժամանակի ընթացքի թեմաների ուսումնասիրման մեջ:

Կարևորելով ուսուցման շարունակական կատարելագործումը՝ հետազոտությունն առաջարկում է նոր մեթոդներ և հնարներ՝ հարմարեցված 8-րդ դասարանի աշակերտների կարիքներին և նախասիրություններին: Խոսքը լուռ և արտահայտիչ ընթերցանության, ստեղծագործության ու կերպարների վերլուծությանը և սովորողների ստեղծագործական հմտությունների զարգացմանը միտված վարժությունների խելամիտ ընտրության մասին է, ինչը նպաստում է ինքնուրույն մտածողության ձևավորմանն ու ինքնարտահայտմանը:

Ավելին՝ **Աշխարհագրություն, Պատմություն, Հայոց լեզու** և **Արվեստ** առարկանի հետ միջառարկայական կապերի ստեղծմամբ առաջարկվում է բազմաչափ ուսուցման փորձ, որը հարստացնում է սովորողների՝ ստեղծագործության մշակութային և պատմական համատեքստի մասին պատկերացումները:

Ըստ էության աշխատանքն ընդգծում է դասավանդման մեթոդների շարունակական կատարելագործման և հարմարեցման կարևորությունը: Դրանով մանկավարժները կարող են հասնել նրան, որ հայ գրականության այս անգնահատելի կտորը շարունակի սիրվել 8-րդ դասարանի աշակերտների կողմից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գասպարյան Դ., Գրականություն: 8-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2012: